



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 13 » _____ 07 _____ 2020թ.

№ 08/ԼԱ-180

**Հուլիսի 6-ից հուլիսի 12-ը դիտված
հիդրոոդերևութաբանական պայմանները ՀՀ-ում**

Ողջ շաբաթվա ընթացքում հանրապետության առանձին շրջաններում դիտվել է անձրև և ամպրոպ: Տեղումների առավելագույն գումարային քանակը գրանցվել է Ապարանում՝ 37մմ, Տաշիրում՝ 31մմ, Արմավիրում՝ 28մմ, Բագրատաշենում, Սեմյոնովկայում, Արթիկում՝ 25-26մմ, Օձունում՝ 22մմ, մնացած շրջաններում մինչև 10մմ քանակությամբ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը հուլիսի 6-9-ին բարձր է եղել նորմայից 1-4 աստիճանով, 10-ին եղել է նորմայի սահմաններում, 11-12-ին՝ նորմայից ցածր 1-2 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է հուլիսի 7-8-ին և Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում, Սյունիքի հովիտներում դիտվել է +35...+37°C, Տավուշում՝ +32...+36°C, Լոռիում և Սյունիքի նախալեռներում՝ +27...+32°C, Շիրակում, Կոտայքում, Գեղարքունիքում, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում՝ +24...+29°C (Գյումրի՝ +32°C, Սեմյոնովկա՝ +22°C) աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում, Լոռիում՝ +8...+12°C, Սյունիքի նախալեռներում՝ +10...+14°C, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում՝ +13...+15°C, Տավուշում՝ +17...+19°C, Արարատյան դաշտում, Վայոց Ձորի նախալեռներում, Սյունիքի հովիտներում՝ 16...+21°C:

Հուլիսի 6-10-ին հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել, հուլիսի 11-12-ին հանրապետության Կուրի ավազանին պատկանող գետավազաններում դիտվել է ջրի ելքերի որոշ մեծացում, իսկ մյուս շրջանների գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 2սմ-ով և կազմել 1900.80 մ (12.07.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է 1սմ-ով:

Հարգանքով՝
Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան